ՅՈՒՆ-ՅԱՂ

Չարաչար 16 Օգոստոս 1886 Հ. Թիվ 135

ԴՈՒՆԴՈՒԿԱՀԱՐ

ՈՒՂՂԱԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Վերջ)

Տարօրինակ ամայութիւն մը կը տիրէր ամբողջ գիւղին մէջ։ Ոչ մէկ ձայն, ոչ մէկ շարժում։ Ամէն ինչ կարծես քնացած էր։ Ամէն ինչ կարծես մեռած էր։ Ամէն ինչ կարծես ամայացած էր։ Ամէն ինչ կարծես ամայացած էր։ Ամէն ինչ կարծես ամայաց

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԵԾ ՀՐԴԵՀ ԵՒ «ԼՈՍՏ ԼԱՆԴ»

Մեզ հրատ. են.—«Լոստ լանդ» ան-գլ. լրագրի խմբագրութիւնը Ս. Պետերբուրգի մէջ ստացած է հետեւեալ հեռագիրը Ս. Ղազարի միաբանութենէն.

«Ի պատասխան ձեր հեռագրին՝ կը պատուիրենք ձեզ հետեւեալ ճշմարտութիւնները. Ս. Ղազարի միաբանութիւնը կը բաղկանայ 1,300 հոգիէ աւելի անդամներէ, որոնք ամենքն ալ հաւատարիմ որդիներ են Հայ Եկեղեցւոյ, եւ ոչ մէկ անդամ կամ ներկայացուցիչ ունի Հռոմի հետ։ Ս. Ղազարի միաբանութիւնը ունի 100 տարուան հին տպարան մը, որ կը գործածուի միայն հայերէն գրքեր տպագրելու համար։ Ս. Ղազարի միաբանութիւնը ունի նաեւ 100 տարուան հին գրադարան մը, որ կը պարունակէ 4000 հատոր հայերէն ձեռագրեր, որոնք ամենքն ալ հաւատարիմ կը մնան Հայ Եկեղեցւոյ ուղղափառ դաւանութեան։ Ս. Ղազարի միաբանութիւնը ունի նաեւ հայերէն տպագրութիւններ, որոնք կը պարունակեն Հայ Եկեղեցւոյ ուղղափառ դաւանութիւնը

ԴՈԽՈՑՈՆ

Ս. Խաչատուր.

Դուք ձեր ուրախությունը և ձեր տխրությունը ոչ երբեք մի՛ պատմեք ձեր ծանոթներին, որովհետև նրանց մեծ մասը ձեր ուրախության վրա կնախանձի, իսկ ձեր տխրության վրա կծաղրի։

Ֆրանկլին.

Ես ուզում եմ ձեզ պատմել մի դեպք, որ պատահեց ինձ հետ։ Ես ուզում եմ ձեզ պատմել, որովհետև ինձ թվում է, թե այդ դեպքը ինձ համար ավելի մեծ նշանակություն ունի, քան ուրիշ մարդկանց համար

րալը մնծն Բրիտանիայի գործակալ չէր և «Foreign Office»-ի կողմից ոչ մի յանձնարարութիւն չէ ունեցել, ուստի նրա վարմունքի համար անգլիական կառավարութիւնը պատասխանատու չի կարող լինել։

—

ԱՆԳԼԻԱ. Անգլիական լրագիրները բուռն ոգևորութեամբ լցրել են տեսաւ հերցոգ Աբերկօրնի նամակը, որ պահպանողական կուսակցութեան ամենաերևելի անձինքներից մինն է, Նա շատ տարիների ընթացքում վարել է Իրլանդիայի փոխարքայի պաշտօն, Դուբլինի համալսարանի կանցլերի և իրլանդական ֆրանկ-մասսօնների մեծ մագիստրոսի պաշտօններ և քաջ տեղեակ է Իրլանդիայի գործերին։ Հերցոգ Աբերկօրնը այդ նամակի մէջ յայտնում է, թէ նոր մինիստրութիւնը Իրլանդիայի վերաբերեալ բոլորովին մտադրութիւն ունի գործ դնելու ստիպողական քաղաքականութիւն։ Ընդ հակառակը նա ունի երեք նպատակ. 1) Տալ աւելի մեծ բաւարարութիւն իրլանդական ժողովրդին իւր դէպի ինքնավարութիւնը ունեցած ձգտումների մէջ, մնաս չպատճառելով երկրի պարլամենտական միութեանը։ 2) Անյապաղ միջոցներ որոնել՝ի կատար ածելու ժողովրդի այն դանկութիւնը, որ կառավարչական բոլոր մասերը Իրլանդիայում յանձնուի իրլանդացիներին և 3) ապահովեցնել բնակուղ, ինչպէս և չքաւորների անձնական և գոյքի իրաւունքները։

—

Օգոստոսի 2-ից «Daily News»-ին Պետերբուրգից հեռագրում են, թէ այնտեղ լուր է տարածուել, որ իբր թէ Չինաստանը արագապէս սպառազինվում է։ Ասում են, թէ անգլիական երևելի զէնքի գործարանները Պնկինից պատուէր են ստացել սրքան կարելի է շուտ ժամանակ պատրաստել և տեղ հասցնել 200,000 հատ հրացան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լուսկիի գործադրութիւնը Եւրոպայում։ Վիճակագրական տեղեկութիւններից իմացվում է, որ Եւրոպական տէրութիւնների մէջ ամենից շատ լուսկի գործ է ածում Ֆրանսիան, Անգլիայում ամեն մարդ օրական միջին թիւով գործ է ածում 8 հատ լուսկի։ Շվեյցարիաում 9-ը, Գերմանիայում-11-ը, իսկ Ֆրանսիացին օրական միջին թիւով գործ է ածում 15 հատ լուսկի։ Սրա գլխաւոր պատճառն այն է, որ Ֆրանսիական լուսկին վատ է։ Եւրոպայում տարեկան միջին թիւով գործ է դրվում 2 միլիարդ լուսկի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՄՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

14 Օգոստոսի

ՍՕՖԻԱ. Որովհետև ժամանակաւոր կառավարութիւնը հրաժարուեցաւ պաշտօնից, ուստի Կարավելովը, մասնակցութեամբ Նիկիֆորովի և Ստամբուլովի, իբրև խնամակալներ, տահմանեց նոր կառավարութիւն։ Մինիստրները նշանակուած են հետևեալ անձինք. արտաքին գործերի մինիստր Ստոյլովը, ներքին գործերի-Րօտոսլավովը, ֆինանսների-Իվան Դեշովը, արդարադատութեան-Վրաչանովը, պատերազմական մինիստր-Ֆօպովը, և ազգային լուսաւորութեան-Ֆեօդօր Իսվոնովը։ Նոր կառավարութեան կազմակերպութեան առթիւ բօլղարական ժողովրդին ուղղած դրութեան մէջ Կարավելովը ասում է, թէ՝ի նկատի ունենալով վերջին դէպքերը, որոնք երկիրը վտանգաւոր դրութեան մէջ ձգեցին և թէ հայրենիքը այդ անելանելի դրութիւնից հանելու համար, որի մէջ նա այժմ գտնվում է յոյս ունենալով բօլղարական ժողովրդի պաշտպանութեան վերայ և կառավարութիւնը աւելի հաստատուն սահմանելու համար, իւր նախագահութեամբ կազմակերպեց յիշեալ մինիստրութիւնը։ Այստեղ կատարեալ խաղաղութիւն է թագաւորում։

Գաւառներից ստացած լուրերը տեղիք են տալիս ենթադրելու, որ ժողովուրդը միաձայն կը միանայ նոր կառավարութեան հետ։

Նոր մինիստրութիւնը դիպլօմատիական գործակալներին ուղղած շրջաբերականով խնդրում է նրանց ընդունել բօլղարական նոր կառավարութիւնը, որ սահմանուեցաւ յեղափոխութիւնից յետոյ։

Գաւառներից եղած բողոքների պատճառով, բօլղարական մինիստրութիւնը հեռացաւ պաշտօնից։ Զօրախումբը կը միանայ նոր կառավարութեան հետ։

Կ. ՊՕԼԻՍ. «Րէյտերի գործակալութեան հեռագիրը հաղորդում է, թէ՝ի նկատի ունենալով բօլղարական դէպքերը, թրքական պատերազմական մինիստրը դադարեցրեց րեդիֆների սպառազինութիւնը, հրամանագրեց Մակեդօնիայի զօրքի գլխաւոր հրամանատարին շարժել զօրքը դէպի Ուսկիւբ և Հասան փաշայի տեղ նշանակեց Սալօնիկում ընդհանուր նահանգապետ Հալի-փաշային։ Իսկ ինչ վերաբերում է բօլղարական գործերին, ինչպէս լսվում է, Ռ. Դուրը, ոչ մի որոշումն չի անել մինչև պետութիւններից իւր վերջին անգամ ուղարկած շրջաբերականի պատասխանները չստանայ։

Օգոստոսի 12-ից—24-ը Ֆիլիպպօպօլից ստացած տեղեկութիւնների մէջ կրկնուած է, թէ ժողովուրդը և րումելիական բոլոր գընդերը ոգևորուած իրենց իշխան Ալէքսանդրի կողմը յայտնեցին։ Մուտկարօվ գնդապետը մի գրութիւն հրատարակեց, որով հրաւիրում է ղովրդին պաշտպանել իշխանի և Բօլղարիայի պատիւը։ Անդորրութիւնը ոչ մի տեղ խանգարուած չէ։

ՖՐԱՆՑԻՆՍԲԱԴ. Այսօր, կէսօրից յետոյ ժամանեց այստեղ իշխան Բիսմարկը, որին երկաթուղու կայարանում դիմաւորեց պետական մինիստր Փիլսը իւր ընտանիքով։

Ժամի հնգին Բիսմարկը ճաշի էր ռուսական արտաքին գործերի մինիստրի մօտ։

Մինիստրին այցելելու եկան Լօնդօնի և Պարիզի ռուսական դեսպանները։

ՖԼՈՐԱՆՍԻԱ. Իւգենհայմից, ուր բնակում է նախկին բօլղարական իշխանի հայրը, լուր է ստացուել, թէ առաջինը գտնվում է Բրեսլավի ճանապարհի վերայ։

ԼՕՆԴՕՆ. Անգլիական բանկը դիսկօնտը բարձրացրեց 2½-ից մինչև 3½%։

ՊԵՏԵՐԲՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

Երեք ամսական պրամարժէքը

Լօնդօն 23¹/₄, 23³/₈ և 23⁹/₃₂.
Համբուրգ 197⅝, 198 197¾
Պարիզ 244½, 245½, 245
Պօլուիմպերիալ 8 ր. 49 կ. սակ.
Մաքս. կուպոն. 8 ր. 48 կ. սակ.
Արծաթ . . . 1 ր. 26 կ. սակ.
Բօրսային դիս. 4 և 6 %
Պետակ. բանկի 5% տոմսեր.
1-ին շրջանի 100¾ ր. կ. սակ.
2-րդ » . . 100 ր. սակ.
3-րդ » . . չկայ.
4-րդ » . . 99¾ ր. կ. սակ.
5-րդ » . . 100 ր. կ. սակ.
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր
1-ին շրջանի 99¾ ր. — կ. սակ.
2-րդ » . . 99¾ ր. — կ. սակ.
3-րդ » . . 99¾ ր. — կ. սակ.
Առաջին ներքին փոխառութեան 5% տանող դումարի « տոմսեր . . . 234½ ր. — սակ.
» 2-րդ . . 226 ր. կ. սակ.
5½% րենտեր 104¼ ր. սակ.
Ոսկէ րենտ. 185 ր. — կ. սակ.
Երկաթուղու րէնտ-99 ր. 37 կ. սակ.
Թիֆլիսի քաղաք. վարկի ընկեր. օբլիգացիաներ—86¼ ր. առք։

Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Գ ա ն ձ ա կ. պ. Մ. Ս-ին. «Նոր-Դար»-ի 108 համարում տպուած Գանձակից մի լուրի դէմ ձեր հերքումը չտպուեցաւ, որովհետև վերջումը դուք ինքներդ ձեզ իրրև լրատուի ոչնչացնում էիք։ Հետևաբար չտպելու մասին յայտնած ձեր կարծիքները անհեթեթ են։ Մեթէ կարծում էք, որ այդ բանների վերայ մենք մի վայրկեան անգամ ուշադրութիւն կարող ենք դարձնել։ Այժմ չենք էլ յիշում, թէ ով էր մեզ լուր հաղորդողը։

Ով էլ որ լինի նա, նրան այնքան ենք ճանաչում, որքան ձեզ, այնքան պարտաւոր ենք նրա հաղորդած լուրերին հաւատ ընծայել, որքան որ ձեզ։ Մնում է միայն, որ լրատուները բարեխիղճ և աչքաբաց լինին։

—

Թ իֆ լ իս. պ. Կ. Ղ.-ին. Ձեր վէպիկը չի տպուիլ. հարկաւոր է նրան լաւ մշակել։ Լուրերի և ձեր յայտնած համակրութեան համար չնորհակալութիւն։

Խմբագիր հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾՕԿՕԼԱԴ

Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.

(Ц. 4657) 50—27

ՇԱՏ ՉԱՓԱՒՈՐ ՎԱՐՉԱՏՈՒԹԵԱՄԲ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ ՓՈՐՁԱՌՈՒ
ՀԱՇՈՒԱՊԱՀՆԵՐ,
Որոնք կարող են ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՀԱՇՈՒԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ հիմնաւորապէս վարել առևտրական ամեն ճիւղերին վերաբերեալ հաշիւները, թէ ՀԱՅԵՐԵՆ և թէ ՌՈՒՍԵՐԵՆ լեզուներով։
Ընդունում եմ նոյնպէս
Ապացուցագրերի, հաշուեցոյցերի և հաշուեգրքերի երեսով ՀԱՇԻՒՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ պատուէրները։
Իմ հասցէն՝ «Նոր-Դար»ի
Խմբագրութեան մէջ։
(Р) 20—3

Հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ՝ Մողնուղ եկեղեցւոյ ՍՈՒՐԲ ԳԱՅԻԱՆԵԱՆ ՀԱՅՑ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԲԱՑՒՈՒԵԼՈՒ Է առաջիկայ Սեպտեմբերից. աշակերտուհեաց ընդունելութիւնը և քննութիւնը կ'սկսուի ներկայ օգոստոսի 19-ից։
Գլխաւոր կառավարիչ Յարութիւն աւագ քահանայ Սուքիասեանց։
3—3

Լոյս տեսաւ ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ որ վաճառվում է
Տրապիզոնում գեր. Գարեգին եպիս. Սրուանձտեանցի,
Էջմիածնում » Ներսէս » Խուդավերդեանցի,
Շամախում արժ. Համազասպ վ. Համազասպեանցի,
Գանձակում » Անանիա վարդապետի,
Շուշում Մակար վ. Բարխուդարեանցի,
Ղզլարում արժ. Գրիգոր վ. Գառնակերեանցի,
Բագուում » Եղիշէ քահ. Գեղամեանցի.
Թիֆլիսում » Թադէոս » Խոճաէնեթեանց և Աբսէն քահ. Բագրատունու
Ալէքսանդրապօլում արժ. Մարտիրոս քահ. Տ. Պօղոսեանցի,
Նոր-Նախիջևանում » Նիկողոս » Բոնդակեանցի,
Քութայիսում » Դաւիթ Ա. » Սարալեանցի,
Գորիում » Սահակ Ա. » Տ. Սահակեանցի,
Սիմֆերօպօլում » Օգսէնտիոս » Կոփչաքճեանցի,
Երևանում պ. Միրզաբէկ Տ. Աստուածատրեանցի,
» պ. Էմին Տ. Գրիգորեանցի,
Օղեսսայում Յարութիւն աղա Պօպովի,
Մոսկուայում պրոֆեսսօր պ. Ներսէս Ներսիսեանցի և
Ջաքթալայում Իսահակ-բէկ Մամիկոնեանցի մօտ,
Մի օր. գինն է Տաճկաստանում՝ 1 մէճիտ. իսկ Ռուսիայում՝ 1 ր. 50 կ.
6—6

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երիտասարդներին և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։

Աւանդելի առարկաներ տրքա են՝ 1) Ազնաբական ՏՆԵՏՈՒԹԻՒՆ, 2) Ազնաբական ԹՈՒՔԱՆՈՒԹԻՒՆ. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հմտութեան վերայ, 5) Ազնաբական ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ, 6) Ազնաբական և մասնաւոր կանոնագրութիւն, 7) Գեղագրութիւն, ցանկացողների համար ևս 8) Ֆրանսերէն լեզու։

Ուսումը սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները օգոստոսի 25-ից, ամենայն օր, երեկոյեան 5-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում՝ Սոլոլակում, Լաբարատորնայա փողոցի վերայ, Յովհաննէս Վորպանեանի տանը, № 11. Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՉՐԻՊԻՍ եղբարց Յովհաննիսեանների բանկային Գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում. Օտարաքաղաքացիք պիտի կուրսերի հիմնողին՝—ից Тифлисъ С. П. Мануэльянцу.
10—2

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն Մարսէլլի և Բաթումի մէջ

Շաբաթ, օգոստոսի 20-ին «ԱՆԱՏՕԼԻ» (Anatolie) շոգենաւը, նաւապետ «ԲՕՇԵՅԼ» (Boshel) գուբս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէլլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում՝ պ. ԴԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԻՆՕԻՆ, նախկին գաէլբէյա Արծրունիների № 103. 4—4

Дозволено цензурою Тифлисъ, 15 го Августа 1886 г. Տպարան Մ. Դ. Ռոտինեանց և ընկ. Типографія М. Д. Ротиніанцъ и К-о Гор. пр., д. № 41